



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 2

ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝

2016 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Օրակարգում՝

1. Ամբիոնային մագիստրոսական կրթական ծրագրերի հայտերի քննարկում և հաստատում:
2. Հայոց լեզվի պատմության ամբիոնի տարեկան հաշվետվությունը:
3. Մինչհամալսարանական կրթության վարչության դպրոցական պայմանագրերի կատարման ընթացքը ֆակուլտետում:
4. Ընթացիկ հարցեր:

Գիտխորհրդի նիստը վարում էր ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը: Իր խոսքի սկզբում նա տեղեկացրեց, որ հայ բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի 25 անդամներից այս պահին նիստին մասնակցում է 22-ը, ապահովված է անհրաժեշտ քվորումը: Պրոֆ. Ա. Ավագյանն այնուհետև խնդրեց մեկ ընթացքում հարգել ողբերգական ավտովթարին զոհ դարձած ֆակուլտետի գերազանցիկ մագիստրոս Տաթևիկ Սարգսյանի հիշատակը:

1-ին հարցը՝ ամբիոնային մագիստրոսական կրթական ծրագրերի հայտերի քննարկումն ու հաստատումը, անցան աշխույժ մթնոլորտում: Նախ՝ ելույթ ունեցավ ֆակուլտետի

դեկան պրոֆ. Ա. Ավագյանը: Նա ներկաների ուշադրությունը հրավիրեց ընդհանրապես մագիստրոսական կրթության նկատմամբ ուշադրության այսուհետ է՛լ ավելի բարձրացման վրա, որի հիմքը հենց մագիստրոսական կրթական լրջմիտ ծրագրերն են. դրանք պետք է լինեն թարմ, հետաքրքիր, ունենան գիտագործնական լայն շրջանակ... Ելույթ ունեցող ամբիոնների բոլոր վարիչները մանրամասն ներկայացրին իրենց ծրագրերը, որոնք հաստատվեցին մանրամասն քննարկվելուց ու լրամշակվելուց հետո:

Օրակարգի 2-րդ հարցում լսվեց հայոց լեզվի պատմության ամբիոնի տարեկան հաշվետվությունը: Այդ առիթով ելույթ ունեցավ ամբիոնի վարիչ պրոֆ. Ա. Աբաջյանը: Նա մասնավորապես ասաց.

«Հայոց լեզվի պատմության ամբիոնի աշխատակիցները հաշվետու տարում զբաղվել են գրաբարի, միջին հայերենի, բարբառագիտության, հայոց լեզվի պատմության հիմնահարցերի ուսումնասիրությամբ և այդ գիտակարգերին վերաբերող դասընթացների մշակմամբ ու կատարելագործմամբ, անշուշտ նաև գիտահետազոտական աշխատանքով:

Ամբիոնն ունի մեկ առկա ասպիրանտ, մեկ հեռակա և երկու հայցորդ:

Հայոց լեզվի պատմության ամբիոնի շատ դասախոսներ մասնակցել են որակավորման բարձրացման տարբեր դասընթացների, և բոլորը բարեհաջող ավարտել են դասախոսների որակավորման բարձրացման առաջին հնգամյակը: Ավելորդ չենք համարում նշել, որ ըստ ԵՊՀ-ի սահմանած աշխատավարձի հավելավճարի կարգի՝ ամբիոնի աշխատակիցների անուններն ընդգրկված են միայն առաջին և երկրորդ կարգերի ցուցակներում:

Հայոց լեզվի պատմության ամբիոնի՝ երկար տարիների ընթացքում ստեղծված գիտական, կրթական հիմնարար ավանդույթները պահպանվել և շարունակվում են այժմ:

Հաշվետու ժամանակաշրջանում վերանայվել է հայոց լեզվի պատմության ամբիոնի դասընթացների մեծ մասը, թարմացվել են միջանկյալ և ավարտական քննությունների հարցաշարերը:

Ամբիոնի դասախոսների մեծ մասը ղեկավարել է Ուսանողական գիտական ընկերության զեկուցումներ, վարել նիստեր: Մի քանիսը դասախոսություններով հանդես են եկել հանրապետության տարբեր դպրոցներում, մասնակցել ԵՊՀ-ի կազմակերպած աշակերտական օլիմպիադային:

Ամբիոնի նախաձեռնությամբ ստեղծվել է Գրաբարագետների ակումբ, որում ընդգրկված են ուսանողներ ոչ միայն հայ բանասիրության ֆակուլտետից, այլև աստվածաբանությունից, ռոմանագերմանական բանասիրությունից: Դոցենտ Ն. Դիլբարյանը ակումբի անդամների համար դասախոսություն է կարդացել Մատենադարանում, ծանոթացրել հին բնագրերի հետ տարվող աշխատանքներին: Ս. Գրիգորյանի և Ն. Դիլբարյանի ուղեկցությամբ մեր ուսանողները եղել են Գևորգյան ճեմարանում, դասեր լսել, ծանոթացել ճեմարանական առօրյային: Այսօր ևս ունենք հերթական միջոցառում՝ ուղևորություն դեպի Էջմիածնի մայր տաճար: Նշենք, որ այս հարցում ամբիոնն ունի ֆակուլտետի, ԵՊՀ-ի հովանավորությունը:

Ամբիոնը նախապատրաստվում է մեկ ամսից անցկացնել միջֆակուլտետային օլիմպիադա՝ «Լավագույն գրաբարագետ» խորագրով: Նպատակը հին հայերենի հանդեպ առավել հետաքրքրություն, աշխուժություն առաջացնելն է:

Գիտական գործունեություն

2015-2016 ուսումնական տարում ամբիոնի դասախոսները հանրապետության տարբեր հանդեսներում հրատարակել են գիտական 30 հոդված, 3 թեզիս: Դոց. Ն. Պողոսյանը լույս է ընծայել մենագրություն՝ «Հայ բառարանագրության պատմության դրվագներ»:

Ամբիոնի ասիստենտ Մարի Սանթուրջյանը ԵՊՀ-ի կողմից ակտիվ մասնակցում է Տեմպուս „ARMENQA,, նախագծի՝ «Որակավորումների ազգային և ոլորտային շրջանակների իրականացումը Հայաստանում» ծրագրին ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրի տարբեր բուհերում: 2015թ. լույս է տեսել „Reforms in the higher education of Armenia, In the context of the Bologna progress,, գիրքը /հեղինակներ՝ Ա. Բուդաղյան, Կ. Հարությունյան, Կ. Ծատուրյան, Մ. Սանթուրջյան/:

Ամբիոնի մի քանի անդամների /Ա. Աբաջյան, Ն. Դիլբարյան, Ա. Յուզբաշյան/ ջանքերով հրատարակության է պատրաստվել «Հայոց լեզվի պատմություն» դասագիրքը, որը հանձնված է գրախոսության: Հավելենք, որ մինչ օրս ամբիոնը չի ունեցել լեզվի պատմության՝ իր ստեղծած դասագիրքը կամ ձեռնարկը:

2015 թ. հոկտեմբերի 14-15-ին հայոց լեզվի պատմության ամբիոնը հայոց լեզվի ամբիոնի հետ համատեղ կազմակերպել էր ականավոր հայագետ Մ. Աբեղյանի 150-ամյակին

նվիրված հանրապետական գիտական նստաշրջան, որին մասնակցել են ամբիոնի գրեթե բոլոր անդամները և բազմաթիվ մասնակիցներ ՀՀ տարբեր բուհերից: ԵՊՀ հրատարակչության կողմից լույս է ընծայվել «Աբեղյանական ընթերցումներ» զեկուցումների ժողովածուն: Նպատակ ունենք «Աբեղյանական ընթերցումներ» գիտաժողովը դարձնելու ամենամյա: Համալսարանի թանգարանին ենք նվիրել Մ. Աբեղյանի՝ գիտաժողովին ցուցադրած 25 մեծադիր նկարների հավաքածուն և մեծ գիտնականի կավե բաժակը, որը մեզ էր հանձնել Հասմիկ Աբեղյանը:

2015թ. նոյեմբերին ԵՊՀ-ի և Համազգային հայ կրթական և մշակութային միության նախաձեռնությամբ ֆակուլտետում կայացավ «Արդի հայերենի հիմնախնդիրներ» խորագիրը կրող միջազգային գիտաժողովը, որտեղ զեկուցումներով հանդես եկան պրոֆ. Ա. Աբաջյանը, դոց. Ն. Պողոսյանը:

2015թ. դեկտեմբերին կազմակերպվել է հայոց լեզվի պատմության ամբիոնի 30-ամյակին նվիրված գիտական միջոցառում, զեկուցումներով հանդես են եկել ամբիոնի դասախոսների մեծ մասը՝ ներկայացնելով ամբիոնի անցած բեղմնավոր ուղին, նրա երախտավորներին: Հոբելյանը եզրափակվեց ամբիոնի դոց. Ա. Յուզբաշյանի ջանքերով կազմակերպած «Միրեցեք զմիմեանս» բեմադրությամբ՝ ողողված նարեկացիական շնչով, որտեղ դրսևորվեց մեր ուսանողության՝ գրաբարի լավագույն իմացությունը: Որպես շնորհակալություն՝ ամբիոնը ասմունքած ուսանողներին գրքեր նվիրեց:

2016թ. ապրիլի 27-ին հայոց լեզվի պատմության ամբիոնը կազմակերպել է վաստակաշատ գիտնական, ամբիոնի նախկին վարիչ Մանվել Ասատրյանի ծննդյան 90-ամյակին նվիրված հանրապետական գիտական նստաշրջան, որտեղ իրենց զեկուցումներով հանդես են եկել ինչպես հայոց լեզվի պատմության ամբիոնի դասախոսներից շատերը /Աբաջյան, Յուզբաշյան, Դիլբարյան, Պողոսյան, Գրիգորյան, Մուրադյան/, ասպիրանտներ Թ. Պողոսյանը և Վ. Բաղմանյանը, այնպես էլ մասնագետներ այլ ամբիոններից, հանրապետության տարբեր բուհերից: Գիտության պետական կոմիտեի հովանավորությամբ հիշյալ գիտաժողովի զեկուցումների նյութերը շուտով կտպագրվեն:

2016թ. հունիսին ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի կազմակերպած «Ձահուկյանական ընթերցումներ» ամենամյա գիտաժողովին ամբիոնի դոց.դոց. Ն. Պողոսյանը, Ա. Խաչատրյանը, Ն. Դիլբարյանը, ասիստենտ Ն. Պարոնյանը հանդես են եկել զեկուցումներով:

Ընդհանուր առմամբ հայոց լեզվի պատմության ամբիոնում տիրում է աշխատանքային, ստեղծագործական աշխույժ մթնոլորտ: Սակայն, իհարկե, կան նաև որոշակի թերացումներ, բացթողումներ. կարծում ենք՝ այս ուսումնական տարում «Ընդհանուր լեզվաբանություն և հայոց լեզվի պատմություն» մասնագիտացումով մագիստրատուրայի խումբ չբացվելու մեջ, օբյեկտիվ պատճառներից բացի, մեղքի իր բաժինն ունի նաև մեր ամբիոնը: Այդ իսկ պատճառով էլ մագիստրոսական ծրագրի նոր առաջարկի հայտ ենք ներկայացրել ընդհանուր լեզվաբանության ամբիոնի հետ միասին՝ կատարելով էական փոփոխություններ: Լուրջ աշխատանք ունեն ուսանողության հետ կատարելու թե՛ կուրսղեկները, թե՛ մյուս դասախոսները»:

Օրակարգի 2-րդ հարցը նվիրված էր ֆակուլտետում մինչհամալսարանական կրթության վարչության դպրոցական պայմանագրերի կատարման ընթացքին: Ինչպես հավաստեցին ելույթ ունեցող ամբիոնի վարիչները, այդ հարցը գտնվում է իրենց ուշադրության կենտրոնում, և ջանում են խնդրի պատշաճ կատարումը:

Ընթացիկ հարցեր՝

ա/ **Լ Ս Ե Ց Ի Ն** – ԵՊՀ դոցենտ, բանասիրական գիտ. թեկնածու Նորայր Պողոսյանի «Գրիգոր Շղթայակիրի Պատրիարք» մենագրության քննարկումը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն – պրոֆ. պրոֆ. Ս. Մուրադյանը, Վ. Սաֆարյանը և Ալ. Մակարյանը:

Նշվեց, որ ներկայացվել է 17-18-րդ դարերի հայ նշանավոր հոգևոր և գրական գործիչ Գրիգոր Շղթայակրի կյանքին և գրական վաստակին նվիրված ամբողջական մենագրություն, որում տեղ են գտել նաև ձեռագիր մատյաններից քաղված նյութեր: Առաջին անգամ հրապարակվող գիրքը կարող է նպաստել Գրիգոր Շղթայակրի սրբադասման ընթացքին, ինչպես նաև հայ եկեղեցու պատմության մի շարք հարցերի լուսաբանմանը:

Մենագրությունը տպագրելու է Երուսաղեմի հայոց պատրիարքությունը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Տպագրության երաշխավորել Նորայր Պողոսյանի՝ «Գրիգոր Շղթա-
յակիր Պատրիարք» մենագրությունը:

բ/ **ԼՍԵՑԻՆ** – Հայոց լեզվի ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Թագուհի Գեղամի
Մանուկյանի ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման հարցերը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն – Պրոֆ. պրոֆ. Յու. Ավետիսյանը, Լ. Հովսեփյանը և դոց. Բ.
Ներսիսյանը:

Նշվեց, որ Թագուհի Մանուկյանը 2016 թվականին գերազանցությամբ ավարտել է հայ
բանասիրության ֆակուլտետի մագիստրատուրան, հանձնել է ընդունելության քննություն-
ները և ընդունվել առկա ուսուցմամբ ասպիրանտուրա՝ «Հայոց լեզու» մասնագիտության
գծով՝ Ժ.02.01:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - 1. Հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ Թագուհի Մանուկյանի ատե-
նախոսության թեմա առաջադրել «Ֆեոդոր Դոստոևսկու «Կարամազով եղբայրներ» վեպի
թարգմանությունը (թարգմանիչ՝ Կ. Սուրենյան)»՝ Ժ. 02. 01- «Հայոց լեզու» մասնագիտութ-
յամբ:

2. Թագուհի Մանուկյանի ատենախոսության գիտական ղեկավար հաստատել բ. գ. դ.,
պրոֆ. Ռուբեն Սաքապետոյանին:

Վերջում գիտխորհրդի նախագահ պրոֆ. Ա. Ավագյանը շնորհակալություն հայտնեց
նիստի բոլոր մասնակիցներին և նիստը հայտարարեց ավարտված:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ

ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ